

COVID-19-ի Հետ Կապված Կեղծիքներ և Խարդախություններ

COVID-19-ի համաճարակի շարունակվելուն զուգահեռ խաբեբաները շարունակում են մարդկանցից խաբեությամբ գողանալ իրենց գումարները: Նրանք գողանում են անձնական տեղեկություններ և վաճառում են այնպիսի իրեր, որոնք չեն աշխատում կամ, ըստ Էուբայան, պետք է լինեն անվճար: Ռոբոտացված զանգերի (robocalls), սոցիալական ցանցերի, ֆիշինգի՝ կեղծ էլ. նամակների և այլ տարբերակների միջոցով խաբեբաները օգտվում են COVID-19-ի շուրջ մարդկանց ունեցած վախերից, մտահոգություններից և շփոթվածությունից: Իմացե՛ք՝ ինչպես հայտնաբերել կեղծ տեղեկությունները և գերծ մնալ COVID-19-ի հետ կապված կեղծիքներից և խարդախություններից:



Ինչպես Հայտնաբերել COVID-19-ին Առնչվող Կեղծ Տեղեկությունները

Ապատեղեկատվությունը հաճախ կիրառվում է մարդկանց մոլորեցնելու համար: Իմացե՛ք՝ ինչ եք փնտրում և ինքներդ ձեզ ուղղեք հետևյալ հարցերը, որպեսզի ստուգե՛ք՝ արդյոք տեղեկությունը վստահելի է.



- **Ինչպե՞ս եմ ինձ զգում տեղեկությունն իմանալուց հետո:**
Եթե տեղեկությունն առաջացնում է ծանր զգացմունքներ, ինչպիսիք են՝ զայրույթը, վախը կամ անհանգստությունը, այն կարող է լինել կեղծ: Կենտրոնացե՛ք փաստերի վրա: Ապատեղեկատվությունը պարունակում է շատ զգացմունքներ և քիչ փաստեր:
- **Արդյո՞ք տեղեկությունը անորոշ է կամ լիարժեք չէ: Արդյո՞ք պատմության մեջ կան բաց թողնված հատվածներ:**
Փնտրե՛ք ամբողջական տեղեկություններ: Հավաստիացե՛ք, որ հեղինակը ներկայացնում է ապացույցներ և բացատրում է, թե ինչպես են նա հանգել այդ եզրակացությանը:
- **Ի՞նչ են հայտնում հեղինակավոր աղբյուրներն այդ հարցի վերաբերյալ:**
Արդյո՞ք Հիվանդությունների Կերասկզման և Կանխարգելման Կենտրոնները (CDC) կամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) տվյալ խնդրի վերաբերյալ հայտարարություն է արել: Մշտապես ստուգե՛ք տեղեկությունը՝ համեմատելով այն ծանոթ և վստահելի աղբյուրների հետ: Իմացե՛ք՝ ինչպես գտնել առողջության մասին հուսալի տեղեկություններ ph.lacounty.gov/hccp/health.htm կայքէջում:
- **Արդյո՞ք ինչ-որ մեկը ցանկանում է վաճառել ինձ որևէ բան կամ պահանջում է իմ անձնական տեղեկությունները:**
Սա գրեթե միշտ ազդանշան է: Ստորև կարդացե՛ք COVID-19-ին առնչվող կեղծիքների և խարդախությունների մասին: Իմացե՛ք ավելին ph.lacounty.gov/hccp/scams.htm կայքէջում:

COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերին Առնչվող Կեղծիքներ

Չզուշացե՛ք խաբեբաներից, որոնք կեղծիքներ են տարածում ձեզ խաբելու համար: Ահա ներկայումս պատվաստանյութերի շուրջ պատվող մի քանի կեղծիքներ:




- **Փումար գանձել մարդկանցից պատվաստանյութերի համար:**
 - Պատվաստանյութերն անվճար են բոլորի համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից, նույնիսկ եթե չունեք ապահովագրություն: Պատվաստանյութերը լայնորեն հասանելի են ամբողջ Լոս Անջելեսի Շրջանում: Շատ պատվաստման վայրերում **ժամադրություն անհրաժեշտ չէ**, և ձեզ չեն հարցնի ձեր **ներգաղթի կարգավիճակի** մասին: Տեսե՛ք այն պատվաստումները հասանելի են շարժունակության խնդիրներ ունեցող մարդկանց:
 - Իմացե՛ք ավելին VaccinateLACounty.com կայքէջում կամ զանգահարե՛ք Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով:

- **Վաճառել «պատվաստանյութ», որն ուղարկվելու է անմիջապես ձեր տուն:**
 - COVID-19-ի դեմ պատվաստանյութերն անմիջապես հանրությանը չեն վաճառվում և տրամադրվում են արտոնագրված բժշկի կողմից: Ձեզ ուղարկվող ցանկացած բան իսկական պատվաստանյութ չի լինելու:
- **Հեռախոսով, տեքստային կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ ձեզնից պահանջել անձնական տեղեկություններ՝ պատվաստանյութը ստանալու կամ մրցանակը կանխիկացնելու համար:**
 - Խաբեբաները կարող են պահանջել ձեզնից անմիջապես տրամադրել ձեր անձնական տեղեկությունները, ինչպես օրինակ՝ սոցիալական ապահովագրության (Social Security) համարը, բանկային հաշվեհամարը կամ կրեդիտ քարտի համարը:
- **Վաճառել COVID-19-ի դեմ Պատվաստման Քարտ:**
 - Մի՛ սեղմեք ձեզ անհայտ հղումները և մի՛ վստահեք այն կայքերին, որոնք գումարի դիմաց առաջարկում են տրամադրել պատվաստման ապացույց հանդիսացող փաստաթուղթ: Դուք երբեք չպետք է վճարեք COVID-19-ի դեմ ձեր պատվաստման քարտի պատճենի համար:
 - Կալիֆորնիայում բոլոր պատվաստված անձինք կարող են պահանջել COVID-19-ի դեմ Պատվաստման անվճար թվային Քարտ: Այցելեք myvaccinerecord.cdph.ca.gov: Պատվաստման քարտերի վերաբերյալ մանրամասները տե՛ս VaccinateLAcounty.com կայքէջում:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի շուրջ պտտվում են բազմաթիվ ապատեղեկություններ: Ստուգեք տարածված որոշ [միջեր և փաստեր պատվաստանյութերի մասին](#) VaccinateLAcounty.com կայքէջում:

COVID-19-ի Թեստավորման Հետ Կապված Կեղծիքներ



- **Առցանց վաճառվող չթույլատրված կամ կեղծ թեստավորման պարագաներով տուփեր:**
 - Նախքան առցանց թեստավորման պարագաներով տուփեր գնելը, ստուգեք այն կայքը, որը վաճառում է այդ պարագաները: Պարզեք, արդյոք թեստը թույլատրված է [FDA-ի-ի թեստավորման կայքէջում](#): COVID-19-ի տեսային թեստավորման մասին իմանալու համար այցելեք CDC-ի [ինքնուրույն թեստավորման կայքէջը](#) կամ FDA-ի [տեսային թեստավորումների կայքէջը](#):
- **Թեստի կեղծ արդյունքներ**
 - Հանրային միջոցառումների անցկացման վայրեր, բիզնեսների տարածքներ և համայնքային վայրեր մուտք գործելու համար կարող է պահանջվել ներկայացնել պատվաստման ապացույց կամ վերջերս հանձնած COVID-19-ի թեստ՝ բացասական արդյունքով:
 - Պատվաստված լինելու վերաբերյալ ապացույց ստանալու կամ բացասական արդյունքով թեստ ունենալու միակ վավերական տարբերակը ՊԱՏՎԱՍՏՎԵԼԸ է կամ ԹԵՍՏ ՀԱՆՁՆԵԼ և բացասական արդյունք ունենալն է:
- **Գումար գանձել այն թեստերի համար, որոնք պետք է անվճար լինեին**
 - **COVID-19-ի թեստավորումն անվճար է և հասանելի է Լոս Անջելեսի Շրջանում բնակվող բոլոր անձանց համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:** Եթե հիվանդ եք կամ, հնարավոր է, վարակվել եք COVID-19-ով, այցելեք covid19.lacounty.gov/testing կամ զանգահարեք 2-1-1 համարով՝ թեստավորման համար գրանցվելու: COVID-19-ի թեստերի մասին իմացեք ավելին ph.lacounty.gov/covidtests կայքէջում:

Վարակակրի Հետ Շփված Անձանց՝ Կոնտակտների Հայտնաբերման Հետ Կապված Կեղծիքներ



- **Խաբեբաները կարող են ներկայանալ որպես կոնտակտների հայտնաբերմամբ զբաղվող անձինք՝ անձնական տեղեկություններ ստանալու նպատակով:**
 - Հանրային Առողջության Վարչությունը դիմում է COVID-19-ով վարակված և նրանց հետ շփված անձանց՝ կոնտակտներին: Մշտապես ստուգեք զանգահարողի ինքնությունը (caller ID) կամ հեռախոսահամարը: Չանգահարողի ինքնությունը (caller ID) հեռախոսի վրա երևում է «LA PublicHealth»-ի կամ 1-833-641-0305 հեռախոսահամարի տեսքով:
 - Հանրային Առողջության Վարչության կոնտակտներին հայտնաբերող մասնագետները երբեք չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին, չեն պահանջի գումար կամ social security-ի համարը: Եթե Հանրային Առողջության Վարչությունը զանգահարում է կամ հաղորդագրություն է ուղարկում ձեզ, խնդրում ենք ետ զանգահարել՝ օգնելու դադարեցնել COVID-19-ը:

Կեղծ բուժումներ կամ «կախարդական դեղամիջոցներ»



- **Դեղամիջոցների կամ «բուժումների» վերաբերյալ գովազդներ, որոնք կեղծաբար պնդում են, որ կանխում կամ բուժում են COVID-19-ը:**
 - Ցանկացած դեղամիջոց, հավելյալ միջոց կամ առողջության համար որևէ արտադրանք ընդունելուց առաջ մշտապես հարցրեք ձեր բժշկին կամ այլ արտոնագրված բուժաշխատողի: Առցանց գովազդվող որոշ «բուժումներ» ցույց տվեցին, որ չեն աշխատում, ստուգված չեն, հետևաբար մենք չգիտենք՝ արդյոք դրանք օգնում են, թե վնասակար են:

Կեղծ «օգնականներ», որոնք առաջարկում են առաքումներ և պատրաստ են կատարել հանձնարարություններ



- **Խաբեբաները կարող են առաջարկել օգնել ձեզ մինչ դուք ձեր տանն եք, այնուհետև փախչել՝ հափշտակելով ձեր գումարները:**
 - Կազմակերպեք, որպեսզի անհրաժեշտ պարագաները, ինչպիսիք են սնունդը և դեղորայքը, ձեզ առաքվեն վստահելի ընկերոջ կամ ձեզ հայտնի ծառայության կողմից:
 - Գրանցվեք անվճար սննդի և սննդամթերքի առաքման համար Լոս Անջելեսի Շրջանի Մսնդի Աղբյուրների Էջում կամ Տարեզների Համար Մսնդամթերքի Հարգերով Արտակարգ Իրավիճակների Արձագանքման Ծրագրում: Կարող եք նաև զանգահարել այդ ծրագիր 1-800-510-2020 հեռախոսահամարով: Այլ տարբերակների համար այցելեք 211LA կամ զանգահարեք 2-1-1 համարով:

Կեղծ բարեգործություններ



- **Եղեք ուշադիր, երբ հերթը հասնում է բարեգործություններին:**
 - Շատերն են ցանկանում օգնել համայնքի մյուս անդամներին, որոնք նեղության մեջ են, սակայն խաբեբաները կարող են չարամտորեն օգտվել մարդկանց բարի կամքից:
- **Թույլ մի՛ տվեք որևէ մեկին շտապեցնել ձեզ նվիրատվություններ կատարելու հարցում:**
 - Ստուգեք՝ արդյոք բարեգործական կազմակերպությունը օրինական է՝ փնտրելով այն Կալիֆորնիայի Գլխավոր Դատախազության (Attorney General) Բարեգործական Հիմնադրամների Գրանցամատյանում: Ձեռք բերեք լրացուցիչ խորհուրդներ ողջամիտ նվիրատվություններ անելու վերաբերյալ [ftc.gov/charity](https://www.ftc.gov/charity) կայքէջում:

Բժշկական տվյալների գողություն և ֆիշինգ-խարդախություններ



- **Խաբեքները փնտրում են անձնական տեղեկություններ և գումար:**
 - ԵՐԲԵՔ մի՛ տրամադրեք ձեր Medicare-ի, Medi-Cal-ի կամ Social Security-ի համարը կամ այլ անձնական տեղեկություններ հեռախոսով, էլեկտրոնային կամ տեքստային հաղորդագրությունների միջոցով՝ ի պատասխան անցանկալի ու չնախատեսված շփման:
- **Կառավարական գործակալությունները չեն զանգահարի ձեզ՝ որևէ բան վաճառելու համար կամ առաջարկելու ձեզ «գրանցվել» հեռախոսազանգի միջոցով:**
 - Ծանոթացե՛ք medicare.gov-ի խորհուրդներին՝ ինչպես կանխել [Medicare-ին առնչվող խարդախությունները](#), իսկ ssa.gov-ում՝ [Social Security-ին առնչվող կեղծիքները](#):
- **Անջատե՛ք ռոբոտացված հեռախոսազանգերը:**
 - Եթե այդ [անօրինական ռոբոտացված զանգերը](#) շարունակվեն, ձեռք բերե՛ք դրանց վերաբերյալ տեղեկություններ և հայտնե՛ք դրանց մասին [Վոկտորի Դաշնային Հանձնաժողովին \(FTC\)](#): Իրական վաճառքի հետ կապված զանգերի քանակը նվազեցնելու համար միացե՛ք «Մի՛ զանգահարե՛ք Ցանկին»: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք consumer.ftc.gov/articles/robocalls:

Եղեք տեղեկացված և ստացե՛ք օգնություն



- Ուսումնասիրե՛ք [կեղծիքների վերաբերյալ վերջին նախագուշացումները](#) Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնես Հարցերի Վարչության «[սպառողների ահազանգեր](#)» կայքէջում:
- Գրանցվե՛ք [կեղծ ահազանգերի](#) համար [Թոշակառուների Ամերիկյան Ասոցիացիայի \(AARP\)](#) և [Վոկտորի Դաշնային Հանձնաժողովի](#) կայքէջում:
- **Բուժօգնություն, սնունդ և առաջնային իրեր** գտնելու համար զանգահարե՛ք Լոս Անջելեսի Շրջանի տեղեկատվական գիծ՝ 2-1-1 համարով կամ այցելե՛ք [211LA կայքէջ](#):
- **Հայտնե՛ք COVID-19-ին առնչվող հնարավոր խարդախության մասին և օգնություն խնդրե՛ք ձեր գումարը ետ ստանալու համար.** կապ հաստատե՛ք Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնես Հարցերի Վարչության հետ dcba.lacounty.gov կայքէջով կամ 1-800-593-8222 հեռախոսահամարով:
- **Հայտնե՛ք թեստավորման կամ բուժական արտադրանքների վերաբերյալ հնչած կասկածելի պնդումների մասին այստեղ՝ ftc.gov/complaint.**
- Այցելե՛ք ph.lacounty.gov/coronavirus՝ COVID-19-ի վերաբերյալ վերջին տեղեկությունների համար: